ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2020թ. թիվ 541-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի ԹԻՎ 152-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 27-ի թիվ 983-Ա և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2017 թվականի ապրիլի 25-ի թիվ 2-Ա «Հայաստանի Հանրապետությունում զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների իրականացման մասին» համատեղ հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Ստեղծել Լոռու մարզի զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց շրջանում կանխարգելիչ պատվաստումների միջոցառումները համակարգող մարզային և տարածաշրջանային հանձնաժողովներ և նշանակել տարածաշրջանային պատասխանատու համակարգողներ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հանձնաժողովներին՝

Կազմակերպել, համակարգել և վերահսկել տարածաշրջաններում նախազորակոչիկների և զորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումները նախապատրաստելու և իրականացնելու գործընթացը:

3. Ստեղծել հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը /ՀԱԴ/ վերլուծող հանձնաժողով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հանձնաժողովին՝

1) վերահսկել պատվաստումների անվտանգ կազմակերպման գործընթացը;

2) ապահովել պատվաստումների ընթացքում արձանագրված ՀԱԴ-երի հայտնաբերումը, գրանցումը և հաղորդումը;

3) վերլուծել հետպատվաստումային անբարեհաջող յուրաքանչյուր դեպք և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ:

5. Լոռու մարզի զինկոմիսարիատներին կցագրված առողջապահական կազմակերպությունների ղեկավարներին՝

1) հաստատել Լոռու մարզի նախազորակոչիկների և զորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի իրականացման ժամանակացույցը:

2) ապահովել պատվաստանյութերի պահպանման, մատակարարման և հաշվառման սառցային շղթան:

6. Լոռու մարզի բժշկական կենտրոնների տնօրեններին՝

1) հաստատել վերակենդանացման միջոցառումներն ապահովող բրիգադների կազմերը:

2) ապահովել բարձր պատրաստականություն՝ անհրաժեշտության դեպքում համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելու համար նախազորակոչիկների և զորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի ժամանակացույցին համապատասխան:

3) արձանագրված դեպքերի վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովին:

7. Լոռու մարզի առողջության առաջնային պահպանման կենտրոնների տնօրեններին՝

1) մինչ կանխարգելիչ պատվաստումների իրականացումը զինկոմիսարիատների կողմից տրամադրված անվանական ցուցակներին համապատասխան ուսումնասիրել պատվաստման ենթակա նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց առողջական վիճակը՝ ժամանակին պատվաստում չստացած, հակացուցումներ և այլ խնդիրներ ունեցող պատանիների հայտնաբերման նպատակով:

2) իրականացնել հսկողություն կանխարգելիչ պատվաստումներ ստացած անձանց նկատմամբ և անհրաժեշտության դեպքում ներկայացնել համապատասխան տեղեկատվություն միջոցառումները համակարգող մարզային հանձնաժողովին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունները կատարող Լ.Վարդանյանի վրա:

9. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2014թ. ապրիլի 23-ի «Լոռու մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների կարգը հաստատելու մասին» թիվ 152-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հուլիսի 17
ք.Վանաձոր

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 17-ի
թիվ 541-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Լ. Վարդանյան - հանձնաժողովի նախագահ, Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, պատասխանատու համակարգող

Հանձնաժողովի անդամներ.

Ա. Գուլանյան - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Ի.Անտոնյան - Լոռու մարզի գլխավոր մանկաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ

Ա.Խաչիկյան - Վանաձորի զինվորական կոմիսարիատին կից գործող բժշկական հանձնաժողովի պատասխանատու բժիշկ

Ա.Հովհաննիսյան - ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

Ս. Լամբարյան - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի պետի պաշտոնակատար /համաձայնությամբ/

<u>Ք.ՎԱՆԱՁՈՐ ԵՎ ԳՈՒԳԱՐՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</u>

Վ.Օհանյան - «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն, պատասխանատու համակարգող

Մ.Սիմոնյան - «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն

Ա.Եդոյան - «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն

Կ.Բաղդասարյան - «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի տնօրեն

Վ.Մկրտչյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն

Ա.Մանուչարյան - «Գուգարքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Լ.Բաղդասարյան - «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա.Գալստյան - «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ -ի տնօրեն

Ս.Աբգարյան - «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա.Քոչարյան - «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Մ.Ղազարյան - «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի մանկաբույժ, Գուգարքի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

<u>ՍՊԻՏԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ</u>

Վ. Սիսակյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն, պատասխանատու համակարգող

Ն. Սարգսյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Սպիտակի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Վ.Յարմալոյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համաճարակաբան

Մ.Լամբարյան - «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա.Թոսունյան - «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն

Պ.Լամբարյան - «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի

տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Մ. Հազրոյան - «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, պատասխանատու համակարգող
Ն.Սուքիասյան - «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Ստեփանավանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ, իմունաբան
Ս.Մարգարյան - «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա.Ղարաջյան - «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ս. Մոսինյան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, պատասխանատու համակարգող
Ա.Ղալայան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Թումանյանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ
Ա.Մոսինյան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի համաճարակաբան
Ա.Հակոբյան - «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ն.Դավիթավյան - «Արևաճագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Կ.Ազարյան - «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրեն
Մ.Էտիբարյան - «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ն.Գրիգորյան - «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն
Ա.Նալբանդյան - «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն
Հ.Առաքելյան - «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրեն
Ս.Վարոսյան - «Թումանյանի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

ՏԱՇԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Գ.Իլոյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն, պատասխանատու համակարգող
Ն.Պետրոսյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Տաշիրի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ
Հ.Խռոյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իմունաբան
Ա.Չոբանյան - «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

07/17/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հուլիսի 17-ի
թիվ 541-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՀԵՏՊԱՏՎԱՍՏՈՒՄԱՅԻՆ ԱՆԲԱՐԵՀԱՋՈՂ ԴԵՊՔԵՐԸ /ՀԱԴ/
ՎԵՐԼՈՒԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Լ.Վարդանյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ.

Ի.Անտոնյան - Լոռու մարզի գլխավոր մանկաբույժ, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ

Մ.Ղազարյան - «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի մանկաբույժ, Գուգարքի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ն.Սուքիասյան - «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Ստեփանավանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ն. Սարգսյան - «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Սպիտակի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ա.Ղալայան - «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Թումանյանի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ն.Պետրոսյան - «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի մանկաբույժ, Տաշիրի տարածաշրջանի պատասխանատու մանկաբույժ

Ա.Հովհաննիսյան - ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/

Ս.Լամբարյան - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հյուսիսային տարածքային կենտրոնի պետի պաշտոնակատար /համաձայնությամբ/

Լոռու մարզի գլխավոր մասնագետները /ըստ անհրաժեշտության/:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

07/17/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ